



ՔԸՀՆԵՑՑԿԵՆ ԴԵՍԼ ԾԸՐՁՐԵՑՆԵԼՈՒ ԸՄԵՆԵՌԻՋԻ  
ՃԸՆԵՊԵՐՀՅ.

Եատ, չափաղանց շատ է գրուել մեր քահանայական գասը ցանկալի բարձրութեան հասցնելու մասին. մեր հրապարակախօսութեան որոշ շանհներ համարեա դլիսաւարապէս զբաղուել են այդ խնդրով, առաջարկել են բազմաթիւ միջոցներ, մատնանիշ են եղել չարիքի վրայ, որոնել են նրա պատճառները նիւթական անապահովութեան, կարգապահութեան, գնահատութեան և այլ այսպիսի խթանների բացակայութեան մէջ. Մի քանիսը պնդել են, որ գեռ մեր ժողովուրդը պատրաստ չէ, կամ կարիք չի դում և չի հասկանում հասկացող քահանայի նշանակութիւնը, որ քահանայ ընտրելիս առաջ են գալիս հադային և այլ խնդիրներ, որ ժողովրդին մեռել թաղող է հարկաւոր և ոչ թէ դպրանոցաւարտ. որ որոշ ցէնզը դեռ բաւական չէ լաւ քահանայ լինելու համար և շատ անդամ ցէնզաւորներն աւելի վատ են կառավարւում գիւղացիների և առ հասարակ ծխականների հետ, քան ժողովրդի միջից ընտրուած և ձեռնադրուած տիրացուները և վերջապէս, որ միջավայրն այնքան փշացած և անուզելի է, որ կրթուած մարդը չըպէտք է քահանայ դառնայ. Տարաբաղդաբար վերոյիշեալ պատճառներից շատ շատերը դոյտթիւն ունին, նրանք չեն չքանում ասպարիզից և երօք որոշ չափով արգելք են հոգեսորականութեան վի-

ճակը ցանկալի բարձրութեան հասցնելու, սակայն բուն  
պատճառը այդ չէ: Կասկած չկայ, որ մտաւոր զարգա-  
ցումն դեռ ևս գրաւական չէ, որ նրա տէրը կարող է լաւ  
քահանայ լինել, ինչպէս գրաւական չէ մասնագիտա-  
կան կրթութիւն ունեցողի բարձր ցէնզը, որ նրա տէրը  
կարող է լաւ ճարտարապետ, լաւ լեզուաբան, լաւ իրա-  
ւաբան, լաւ զինւորական և այլն լինել և ամենաթոյլ  
գրաւական է, որ նրա տէրը կարող է լաւ քաղաքացի և  
լաւ մարդ լինել: Կասկած չկայ, որ լաւ քաղաքացի  
լինելու համար հարկաւոր է կանոնաւոր գաստիարակու-  
թիւն և կրթուած խիղճ, խոկ այդ չի կարող տալ մի  
միայն դպրոցը և առարկաների ահագին շարքը. ոչ, գրա-  
համար հարկաւոր է, որ միջավայրն ինքը կրթիչ լինի,  
իրաւունք ունենայ ազատ քննելու և գատապարտելու  
կամ իրախուսելու համաքաղաքացու լաւ և վատ գործը  
և ոչ թէ խեղդուած լուռ և իրաւազուրկ հանդիսա-  
տես լինելու իւր դրացու գործունեութեան քննադատու-  
թեան խնդրում՝ Ենչիցն է փչանում մարդա: Անշուշտ  
իրաւազուրկ, սորուկ և անպատուաբեր դրութիւնից և  
միջավայրի անտարբերութիւնից, խոկ միանգամ փչացած  
և այդ կացութեան զգուելիութիւն գիտակցող մարդուն  
ուղղուելու համար արդէն այնպիսի մեծ ճիգ և կամքի  
ոյժ է հարկաւոր, որ բոլորին տրուած չէ: Մեր կեանքը  
կարծեմ աւելի քան հօկայական ապացոյցներ տուաւ, որ  
երբ հասարակութիւնը հեռանում է իւր հասարակական  
գործից, երբ նա իւր իրաւազուրկ դրութեան շնորհիւ  
անտարբեր է գառնում՝ դէսի այդ գործն ու գործիչ  
ները, խոկոյն այդտեղ բռն է դնում յանցանք և կամա-  
յականութիւն, որն ամենասարսափելի թոյն է գործը  
սպանելու համար: Արդեօք նայն այդ պատճառը՝ հասա-  
րակութեան անտարբերութիւնը մի կողմից և միւս կողմից  
էլ ժողովրդին գործից հեռու պահելու համար մի քանի  
անդլուխների սխալ ձգտումն չէ պատճառը, որ մեր քա-  
հանայական դասը մեծ մասմբ մնացել է անշարժ, չի  
լաւացել և պատրաստուած «լաւ» անհատներն էլ ընդհա-

Նուր մեռելութեան մէջ դարձել են անտարբեր և մեռել կենդանի գործի, քարոզի և հոգիների ըժշկութեան համար։ Արարատի յունիսի համարում տպուած Խուցեան սարկաւագի խմբագրութեանս ուղղած դառն ճշմարտութիւններով լի նամակը և Թիֆլիզի դպրաց դասի հանրագիր խնդրագիրը թեմակալ Առաջնորդին պարզ մատնանշով չէ քահանայական ներկայ դրութեան գլխաւոր պատճառների վրայ։

«Եատ տարօրինակ է մեր հասարակութիւնը, նա կարծէք հետաքրքրուում է ժամանակակից ամեն տեսակ հարցերով, մինչև անդամ նրան զբաղեցնում է սափրիչների, մատգործների, կօշկակարների և շատ ուրիշների վիճակը, պաշտպանում է նրանց, խօսում և գրում են, որ նրանք էլ մարդ են մարդկանց շարժում, ապա ուրեմն նրանց հետ էլ պէտք է մարդավարի վարուել և այլն . . . բայց ոչ ոք չուզեց հետաքրքրուել իրեն եկեղեցու պաշտօնեաների հարցով։»

Հասարակութիւնն իւր անտարբերութեամբ սկսել է սպանել իւր հոգևորականներին. կենդանի, ոգևորոզ գործունէութիւն շկայ, թեմական իշխանութիւնները շատ հեռու չեն եղել բիւրօկրատ—խանական սովորութիւններից ու ձեւրից. ծոյլն ու աշխատաէրը, գործունեան և գործ քանդողն իրարից չեն տարբերուել պատժի և պարգևատրութեան խնդիրներում, քահանայական դասսակարգն ինքը եղել է անտարբեր գէպի իւր յանցաւոր ընկերակիցներն և միացած ձայն չի բարձրացրել ասպարէզն այդպիսիներից մաքրելու. այն ստորին շարքերում, որոնք, ինչ էլ անելու լինինք, ապագայում պէտք է ժառանգեն նրանց տեղը՝ որպէս երկար տարիներ եկեղեցուն ծառայողներ, այդ դասակարգի մտաւորը բարձրացնելու, նրանց մարդկային իրաւունքներ տալու և պաշտպանելու. համար ոչ ոք չի աշխատում, այլ դեռ ընդհակառակն՝ նրանց մշտական մուրացիկ կէս քաղցած դրութեամբ պահելուց և իբրև տան սպասաւոր ծառայեցնելուց յետոյ, հասարակութեան անտարբերութեան

շնորհիւ փաթաթում են ժողովրդի և եկեղեցու վզին և գեռ յայս ունին, որ հնար պէտք է լինի բարձրացնելու և բարելաւելու քահանայական դասի դրութիւնը թէկուդ որոշ ցէնզի շնորհիւ կարծում ենք, որ այդ առ նօւազն մոլորութիւն է։ Ցէնզը մի միայն թոյլ դրաւական է մեծա գոյն չարիքի մէջ շընկնելու և ուրիշ ոչինչ իսկ կրթովը, լաւացնողն ու ազնուացնողը պէտք է լինի միայն հասարաւ կութեան դատաստանն ու ընկերական շընչանը։ Այդ երկուոր պէտք է հսկեն, պէտք է դատեն և դատապարտեն յանցաւոր անարժաններին։ Հասարակութիւնը մի կողմից և դպրաց դասը միւս կողմից պէտք է պաշտպանեն իրենց իրաւունքները խմբակցութեամբ, որպէս մի մարմին և հոգի, չըպէտք է թոյլ տան, որ փչացած, արատաւոր ու անպատրաստ մարդիկ մուտք գործեն այդ դատակարդի մէջ։ Եղած անպատրաստներին հետզհետէ պէտք է աշխատեն ուղղել և բարձրացնել. իշխանութեան առաջ չըպէտք է ներկայանան որպէս զրկուած անհատներ. նրանց խնդիրն ու պահանջը պէտք է լինի ընկերական՝ խմբակցական և եթէ այդ բանում որոշ աջակցութիւն ունեցան և մերձաւոր իշխանութեան կողմից և մի փոքր դուրս եկան ներկայ նիւթական և բարոյական ստրուկ վիճակից, կըտեսնեն, որ այդ երկար չըլուծուած խնդիրը հետզհետէ լուծում է ամենայն դիւրութեամբ։ Մենք չենք կասկածում, որ թեմական իշխանութիւնները օգնութեան կը հասնեն իրաւազուրկներին և ի ոէր եկեղեցու կաշխատեն և այն կրտսեր եղբայրների համար, որոնցից՝ ինչ արդելքներ էլ ստեղծելու լինինք, դուրս է գալու քահանայական դասակարդի որոշ մասը։

Ուրախ ենք, որ Թիֆլիզի դպիրներն ու սարկաւագները գիտակցել են իրենց ընդհանուր իրաւազուրկ դրութիւնը, հանդէս են եկել խմբակցութեամբ և ձայն հանել, խնդրել, որ ի նկատի առնուի իրենց ծանր դրութիւնը և պաշտպանուին նրանց շարքերը ամեն տեսակ պատահական անձինքների մուտք գործելուց։ Քահանայական դասակարդը բարձրացնելու, միակ ճանապարհը դըպ-

բաց գասը լաւացնելու, իրաւատէր և փոքր ինչ ապահով դարձնելու մէջն է, իսկ դրա միակ միջոցը դասակարգա-յին—ընկերական կազմակերպութիւնն է իւր խիստ կա-նօնադրութեամբ և ընկերական հասարակական դատաս-տանով ու պահանջներով։ Ահա այս գիտակցելուց և գոր-ծադրելուց է կախուած մեր քահանայական հին խնդրի կանոնաւոր և բաւարար լուծումը։ Բայց անշուշտ կան ուրիշ շատ նպաստաւոր և աննպաստ պայմաններ, որոնց մենք կըդառնանք հետեւեալ անգամ։